Հավելված՝ համագործակցային ուսուցման մեթոդներ

1.Անկյուններ

«Անկյունները» համագործակցային ուսումնառության մեթոդներից է, որի նպատակը բանավեճ ծավալելու և խմբային աշխատանքի միջոցով կառուցողական եզրակացությունների ձևավորումն է: «Անկյունները» կարող են դառնալ երկու և ավելի տեսակետներ հարուցող, հակասական հարցերի շուրջ ծավալվող բանավեճերի կառավարման զվարճալի և ակտիվ միջոց: Դասի ընթացքում դրանով կարելի է շարունակել տեքստի ընթերցումը, դասախոսությունը, ֆիլմի դիտումը, դասի ամփոփումը կամ պարզապես աշակերտներին հետաքրքրող որևէ թեմայի քննարկումը:

«Անկյունների» քայլերը պարզ են: Դրանց իմաստն այն է, որ աշակերտները խնդրի վերաբերյալ ընդունեն իրենց դիրքորոշումը և կարողանան այն հիմնավորել ու պաշտպանել: Այս մեթոդն աշակերտներին մղում է լսելու դիմացինի մտքերն ու փաստարկները և, նրանց տրամաբանությունն ընդունելու դեպքում, փոփոխել սեփական պատկերացումը կամ մեկ անգամ ևս համոզվել, որ նրանց կարծիքը ճիշտ է:

Քայլ 1. Թեման կամ խնդիրն ընտրելուց հետո աշակերտներին պետք է բացատրել, որ նրանցից պահանջվում է խորհել այդ թեմայի շուրջ և ընդունել նախնական դիրքորոշում:

Քայլ 2. Պետք է որոշել, թե մասնակիցները կոնկրետ ինչ դիրքորոշում կարող են ընդունել տվյալ խնդրի վերաբերյալ: Կարևոր է աշակերտներին առաջարկել դիրքորոշման երկու-երեք տարբերակ: Ուսուցիչը կարող է դիրքորոշումները սահմանել նախօրոք, կարելի է նաև աշակերտների հետ մտավոր գրոհի միջոցով հանգել մի քանի տեսակետների:

Քայլ 3. Ձևակերպել գրավոր փաստարկ (հիմնավորում) իրենց ընտրած դիրքորոշման օգտին մոտ 5 րոպեի ընթացքում՝ լինելով համոզիչ ու հետևողական:

Քայլ 4. Գրառումն ավարտելուց հետո «կողմ» դիրքորոշում ընտրած աշակերտներին հավաքել սենյակի մի անկյունում, իսկ «դեմ» դիրքորոշում ընտրած աշակերտներին՝ մյուս անկյունում: Ովքեր որոշակի դիրքորոշում չունեն, պետք է զբաղեցնեն սենյակի երրորդ անկյունը: Այլ տեսակետներ ձևավորվելու դեպքում, դրանց կողմնակից խմբերը նույնպես պետք է առանձնանալու համար տեղ ունենան:

Քայլ 5. Յուրաքանչյուր խմբի աշակերտները պետք է միմյանց հետ փոխանակեն իրենց փաստարկները, քննարկեն և ընտրեն իրենց դիրքորոշումն ամրապնդող ամենահամոզիչ փաստարկները (մոտ 5 րոպե): Յուրաքանչյուր խումբ պետք է ընտրի խոսնակների, որոնք խմբի կարծիքը պետք է ներկայացնեն ծավալվող բանավեճի ընթացքում:

Քայլ 6. Բանավեճը կարելի է սկսել՝ խնդրելով խմբերից մեկի խոսնակին, որ հստակ ներկայացնի իրենց դիրքորոշումը, լավագույն հիմնավորումն ապահովող որոշիչ փաստարկները: Մյուս խմբերը նույնպես ներկայացնում են իրենց աշխատանքները:

Քայլ 7. Խոսնակները, երբ ավարտեն բանավեճի «պաշտոնական» մասը, խմբերի մյուս անդամներին նույնպես կարելի է ներգրավել քննարկումներում: Օգնության կարիք ունեցող խմբին առաջարկեք մի քանի խրախուսող հարցեր, օրինակ՝

«Ինչո՞ւ դուք՝ «Ա» խմբի աշակերտներդ, չեք ընդունում «Բ» խմբի կարծիքը:
«Բ» խմբի դիրքորոշման հատկապես ո՞ր մասի հետ համաձայն չեք:
Այստեղ ինչ՞ փաստարկներն ստիպեցի՞ն ձեզ ընդունել այս կամ այն
հստակ դիրքորոշումը:
Ինչո՞ւ «Բ» խմբի անդամների համար «Ա» խմբի փաստարկները համոզիչ չեն:

Քայլ 8. Սովորողներին պետք է բացատրել, որ քննարկման ընթացքում կարող են փոխել իրենց կարծիքը և ազատորեն փոխել խումբը: Դրա համար նրանք նախկին համախոհների անկյունից պետք է տեղափոխվեն այն անկյունը, որի դիրքորոշումն ավելի համոզիչ է:

Քայլ 9. Քննարկումն ավարտելուց և խմբերում վերջնական տեղ գրավելուց հետո, խնդրեք յուրաքանչյուր խմբին ձևակերպել իր դիրքորոշումը և ամփոփել հիմնավորող փաստարկները:

Մեկնաբանություններ

Այս մեթոդը ներառում է մի քանի քայլեր, որոնք պահանջում են ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանք, օրինակ՝ աշակերտներին առաջարկվում է հարցի վերաբերյալ անհատական կարծիք ձևակերպել: Սա նշանակում է, որ աշակերտը, մինչ ուրիշներին լսելը, բավարար գիտելիք ունի

և, ակտիվացնելով իր մտքի աշխատանքը, պատրաստ է ձևակերպել իր դիրքորոշումը: Չնայած ոմանց համար այս քայլը կարող է դժվար լինել, սակայն դա գործընթացի կարևորագույն քայլերից է, որովհետև հայտնի փաստ է, որ սովորող մարդն առավել շահագրգռված է ներգրավվում ուսման մեջ, եթե քննարկվող նյութը հետաքրքրում է նրան ու կարևորում է խնդիրը: Դրա պատճառներից մեկն էլ այն է, որ այս փուլում աշակերտներն արդեն ստիպված են ակտիվացնել գիտելիքներն ու պատկերացումները, պատրաստ են լինում նախնական բանավեճի՝ մինչև թեմայի խորազնին ուսումնասիրությունը:
Ընդհանուր առմամբ «Անկյունները» կշռադատման փուլի մեթոդ է, երբ բոլորը տեղեկացված են թեմայի մասին, սակայն մտքի աշխատանքը (անհատական առումով), որ կատարվում է ընթացքում, կարող է դասվել նաև խթանման փուլի հատուկ գործողությունների թվին: Շատ կարևոր է, որ յուրաքանչյուր աշակերտից պահանջվի ընտրել դիրքորոշումներից մեկը: Տեսակետների հրապարակումը նրանց դասում է կոնկրետ դիրքորոշման ջատագովների շարքը, և հստակ նկատվում է, որ յուրաքանչյուրը կարծիք ունի, որ այդ կարծիքները հավասարապես հաշվի են առնվում:

Այս մեթոդն առավել կարևոր է այն բանով, որ աշակերտներին թույլ է տրվում հրապարակայնորեն փոխել դիրքորոշումը: Աշակերտները պետք է հասկանան, որ մտքի աշխատանքը շարունակական գործընթաց է և կարող է հանգեցնել տարբեր եզրահանգումների, որ կարծիք փոխելը լուրջ մտածողության բնականոն ու կանխատեսելի արդյունք է: Այս աշխատանքն աշակերտներից պահանջում է նաև մտքի հստակ ու պարզ արտահայտելու կարողություն: Անշուշտ, կարևոր է կարծիք ունենալը, բայց դա արժևորվում է միայն այն դեպքում, երբ ուրիշներին հաղորդվում է հստակ, հիմնավորված ու հասկանալի:

Խմբի դիրքորոշումն ամփոփելն ու հիմնավորելը, ինչպես առաջարկվում է քայլ 9-ում, կշռադատման փուլի վարժություն է: Ե՛վ խմբային, և՛ անհատական վարժությունների կատարումն ամրապնդում է աշակերտների այն ընկալումը, որ իրենք են պատասխանատու իրենց կարծիքների և պատկերացումների համար, որ իրենց տեսակետների հիմնավորումներն իրենք պետք է առաջարկեն՝ վեր հանելով քննարկվող հարցի վերաբերյալ իրենց գիտելիքները: Նրանց տեսակետները սնող աղբյուր կարող են լինել այլոց մտքերն ու գաղափարները, սակայն նրանք պետք է կարողանան սեփական տեսակետն արտահայտել սեփական բառերով:

2. Մտագրոհ (մտքերի տարափ)

«Մտքերի տարափը» կամ «Մտագրոհը» խմբային (թիմային) աշխատանքի պարզագույն, բայց շատ արդյունավետ մեթոդներից է, որի նպատակը մտքերի վերարտադրումն է, երբ պարզապես խրախուսվում են ուսումնասիրվող նյութի հետ այս կամ այն կերպ առնչվող բառեր թվարկելն ու գաղափարներ արտահայտելը: «Մտքերի տարափ» մեթոդը կիրառելիս արտահայտված բոլոր մտքերն ու գաղափարներն ընդունելի են, «սխալ» չկա:

Քայլ 1. Ուսուցիչը թեման, խնդիրը ձևակերպում է բանավոր, հրահանգի ձևով կամ որպես վերնագիր գրում է գրատախտակին ու խնդրում աշակերտներին արտահայտվել դրա վերաբերյալ:

Քայլ 2. Աշակերտները մտքերը, գաղափարները, տեսակետներն ազատորեն արտահայտում են: Արտահայտված բոլոր մտքերը գրանցվում են, այնուհետև հավաքագրվում են՝ ի տես բոլորին:

Խմբային աշխատանքի ժամանակ յուրաքանչյուր խումբ ինքն է ընտրում գրառման ձևը՝

- պարզապես թվարկմամբ գրանցել,
- առանց վերլուծության խմբավորել գրանցումները թղթի տարբեր անկյուններում,
- կենտրոնում գրել խնդիրը, թեման, ապա դրա շուրջը շրջանաձև գրել՝ «Հավաքել արտահայտված մտքերը» և այլն:

Մեթոդը, եթե կիրառվում է ամբողջ դասարանի մասնակցությամբ, ապա գրանցումները գրատախտակին կամ թղթի վրա կարող է կատարել ուսուցիչը կամ աշակերտներից մեկը (մի քանիսը): Եթե դասարանը բաժանված է համագործակցային խմբերի, անհրաժեշտ է խմբերից յուրաքանչյուրին հիշեցնել, որ թիմակիցներից մեկին հանձնարարվելու է գրանցել բոլոր մտքերը: Աշխատանքն ավարտելուց հետո մեկ այլ մասնակից պետք է գրառումները ներկայացնի ամբողջ դասարանին: Խմբերի գրառումներն ընթերցում են բոլորի համար, գրանցումներով թղթերը փակցնում են լսարանում՝ մինչև դրանց վերլուծությանն անցնելը:

Քայլ 3. Այս կամ այն մեթոդն օգտագործելով՝ ուսուցիչն ուսուցանում է թեման աշակերտներին:

Քայլ 4. Անդրադարձ է կատարվում մտագրոհի արդյունքներին՝ ճշգրտելով, ուղղելով, լրացնելով, ամբողջացնելով նախնական մտքերի ու գաղափարների ցանկը:

Մեկնաբանություններ

Դասընթացում «Մտագրոհ» մեթոդի շնորհիվ վեր են հանվում աշակերտների նախնական գիտելիքները տվյալ թեմայի վերաբերյալ, ինչը ձեռք են բերում դասի խթանման փուլում: Դասի վերջում՝ «կշռադատման փուլում», երբ արդեն աշակերտները ծանոթացել կամ յուրացրել են թեման, անպայման անդրադառնում են մտագրոհի արդյունքներին՝ ճշգրտելով, ուղղելով, լրացնելով, ամբողջացնելով նախնական մտքերն ու գաղափարները: Միայն այս դեպքում է աշակերտն ընկալում նոր տեղեկատվությունը որպես գիտելիք:

«Մտագրոհ» մեթոդով աշխատելիս հետևել հետևյալ կանոններին՝

1. պետք է բացառվի որևէ քննադատություն,
2. պետք է խրախուսվեն բոլոր գաղափարներն առանց քննադատության,
3. պետք է ապահովել մասնակիցների միջև հավասարություն,
4. պետք է ապահովել զուգորդումների «ասոցիացիաների» ազատություն,
5. բոլոր մտքերը անպայման գրառել:

«Մտագրոհի» գործածումն արդյունավետ է յուրաքանչյուր առարկայի դասի խթանման փուլում, ինչպես նաև այն ժամանակ, երբ անհրաժեշտ են գաղափարներ, մտքեր՝

- որոշումներ կայացնելու համար,
- կոնկրետ խնդիր լուծելու համար,
- ստեղծագործական մտածողությունը խթանելու համար,
- երևակայությունը զարգացնելու համար,
- լսելու հմտություններ ձևավորելու համար,
- համագործակցային թիմ ձևավորելու համար,
- համարձակություն, ինքնավստահություն ներշնչելու համար:

Աշխատանքի ընթացքում ակնհայտ են դառնում այս մեթոդի կիրառման առավելությունները՝

1. այն խթանում է ստեղծագործական մտածողությունը: «Մտագրոհը» մտքեր վերարտադրելու այն միջոցներից է, որ համակարգված է, ունի հստակ կառուցվածք ու հեշտ է կիրառել բոլոր սովորողների համար,
2. խմբում կազմվում է գաղափարների, առաջարկների ավելի լայն ցանկ,
3. խմբային աշխատանքի այս տարբերակում որևէ արդյունավետ միտք չի անտեսվում,
4. պարզ մեթոդ է, հեշտ է և՛ հասկանալը, և՛ կիրառելը: Այն չի պահանջում բարդ սարքավորումներ ու երկարատև ուսուցում, իսկ արդյունքները կարելի է հեշտությամբ գնահատել,
5. ակնհայտ է, որ ծնվող յուրաքանչյուր միտք, անմիջապես գնահատող դատողության հետ բախվելով, նվազեցնում է առաջարկությունների հոսքը: Ստեղծագործական մտածողությունը կարող է զարգանալ միայն այնտեղ, որտեղ թույլատրվում է գնահատել, միայն այն ժամանակ, երբ ավարտվում է լուծումներ առաջարկելու ընթացքը:



3. Փոխգործուն նշանների (գրառումների) համակարգ (ՓԳՆՀ)

Նոր, անծանոթ նյութի հետ աշխատելու հմտություն ձեռք բերելու նպատակով շատ օգտակար է կիրառել փոխգործուն նշանների համակարգը (ՓԳՆՀ):

Քայլ 1. Երեխաներին պետք է նախապատրաստել դասագրքի կամ որևէ այլ նյութ կարդալու, ծանոթացնել ՓԳՆՀ-ին, որից երեխաները պետք է օգտվեն ընթերցելիս:

ՓԳՆՀ-ն հետևյալն է՝

«+»նշանը դրվում է, երբ այն, ինչ կարդում եք, նորություն է (չգիտեք):

«V» նշանը դրվում է, երբ այն, ինչ կարդում եք, հաստատում է իմացածը, ծանոթ է (գիտեք):

«-» նշանը դրվում է, երբ այն, ինչ կարդում եք, հակասում է ձեր նախնական գիտելիքներին այդ բնագավառում:

«?» նշանը դրվում է, երբ այն, ինչ կարդում եք, անհասկանալի է կամ դուք ցանկանում եք ստանալ ավելի խորը գիտելիք այդ հարցի վերաբերյալ:

«!» նշանը դրվում է, երբ այն, ինչ կարդում եք, հետաքրքիր է, կարելի է քննարկել:

Կարդալու ընթացքում երեխաները պետք է տեղադրեն այդ նշանները՝ ըստ նյութի իմացության ու պատկերացման: Այդ նշանների օգնությամբ երեխան պետք է կարողանա ընդհանուր առմամբ ներկայացնել իր պատկերացումը տվյալ նյութի մասին: Ի վերջո կարող է լինել այնպես, որ յուրաքանչյուր պարբերության մոտ աշակերտը դնի մեկ կամ երկու նշան, երբեմն՝ շատ, երբեմն՝ քիչ: Աշակերտներին պետք է բացատրել, որ ընթերցման ընթացքում պարտադիր չէ նշան դնել յուրաքանչյուր պարբերության կամ մտքի առաջ:

Քայլ 2. Երեխաները նշանները դնելով՝ կարդում են տեքստը:

Քայլ 3. Երեխաներին պետք է հանձնարարել լրացնել հետևյալ աղյուսակը:

+	-	?	V

Նրանք պետք է համառոտ ներկայացնեն այն մտքերը, որոնք առանձնացրել են որևէ նշանով: Այսինքն՝ երեխաներն աղյուսակը լրացնելու համար ստիպված կլինեն նորից կարդալ տեքստը, վերանայել իրենց վերաբերմունքը դրված նշանի վերաբերյալ:

Քայլ 4. Առաջարկեք երեխաներին, որ յուրաքանչյուրն իր կողքի աշակերտի հետ համեմատի աղյուսակները: Հավանական է, որ նրանցից մեկի համար հասկանալի միտքն անհասկանալի լինի մյուսին: Նրանք պետք է միմյանց բացատրեն նյութը:

Այս աշխատանքը կատարելուց հետո, եթե երեխաները հարցեր ունենան կամ անհասկանալի մտքերի առկայության դեպքում, ուսուցիչը պետք է պատրաստ լինի դրանք պարզաբանելու և բացատրելու: Նա անհասկանալի հարցերի վերաբերյալ պետք է հանձնարարի տնային առաջադրանք, որպեսզի ուսումնասիրեն նյութը՝ օգտագործելով լրացուցիչ գրականություն: Հետևաբար՝ ակտիվ մասնակցելով քննարկումներին ու ճիշտ կատարելով աշխատանքը դասարանում, յուրաքանչյուր աշակերտ կպարզաբանի այն ամենը, ինչը կապված է տվյալ դասի թեմայի հետ:

Քայլ 5. Բավարար ժամանակ ունենալու դեպքում, կարելի է հանձնարարել երեխաներին գրել մի կարճ շարադրություն թեմայի շուրջ՝ օգտագործելով նոր գիտելիքները: Աշակերտներն իրար հետ քննարկելուց հետո, շարադրություններից մի քանիսը կարելի է կարդալ ամբողջ դասարանի համար կամ ուղղակի բանավոր ամփոփել:

Մեկնաբանություններ

ՓԳՆՀ-ն արդյունավետ միջոց է, որը կարդալու ընթացքում օգնում է աշակերտին վերահսկել սեփական ընկալումը: Սովորական երևույթ է, երբ մի ամբողջ էջ կարդալուց և այն շրջելուց հետո ոչինչ հիշել չի լինում: Դա առանց հասկանալու կարդալու, առանց ճանաչողական ջանքի կարդալու և, վերջապես, առանց ընկալելու կարդալու ցայտուն օրինակ է: ՓԳՆՀ-ն տեքստը կարդալու ընթացքում հետաքրքրությունը կայուն պահելու արդյունավետ ձև է:

Քայլերի տևողությունը կախված է դասարանի աշակերտների հմտություններից, դասի տևողությունից, նյութի ծավալից, բարդության աստիճանից և այլն: Պետք է այնպիսի նյութ ընտրել, որ հասանելի լինի տվյալ դասարանի երեխաներին, անհրաժեշտության դեպքում, սկսնակ երեխաների հետ կարելի է աշխատել տեքստի մի մասով և շարունակել դասախոսությամբ կամ այլ կերպ:

Նշանների քանակը կախված է երեխաների տարիքից, արդյոք նրանք կկարողանան օբյեկտիվ գնահատել իրենց գիտելիքները: Շատ կարևոր է նշել, որ նման աշխատանք կատարելու ընթացքում երեխան ազատ է սեփական գիտելիքները գնահատելու հարցում: Նա ոչ ոքից չի վախենում, չի ամաչում, իրեն ոչ ոք չի խանգարում օբյեկտիվ գնահատել իր գիտելիքները: Առաջին անգամ կարդալով անծանոթ տեքստը, երեխան ստանում է ինչ-որ տպավորություն, նշում է իր վերաբերմունքը, գնահատում է իր գիտելիքը տվյալ մտքի շրջանակներում: Այնուհետև, աղյուսակը լրացնելու համար նա ստիպված է լինում նորից կարդալ այդ պարբերությունը, այդ միտքը: Այդ ընթացքում, քանի որ նա արդեն ծանոթ է ամբողջ տեքստին, հնարավոր է իր գնահատականը փոխվի: Կողքի աշակերտի հետ քննարկելու ընթացքում երեխան կրկին կարող է կարդալ տեքստի նույն հատվածը և կրկին փոխի իր գնահատականը:

Դասարանի հմտություններից կախված՝ կարելի է սկզբնական շրջանում քննարկում չանցկացնել ու բավարարվել միայն նշաններ օգտագործելով, այնուհետև հանձնարարել աղյուսակը լրացնել: Ավելի ուշ, երբ աշակերտները վարժվեն նման աշխատանքին, պետք է ավելացնել քննարկումները:

Այս մեթոդով աշխատելու ժամանակ աշակերտներն ամբողջ դասի ընթացքում ակտիվ են, նրանք աշխատում են՝ կարդում, քննարկում, մտածում, միմյանց սովորեցնում, օգնում, գնահատում են իրենց գիտելիքները: Այս մեթոդով աշխատելիս զարգանում են երեխաների բոլոր այն կարողություններն ու հմտությունները, որոնց մասին նշված է «Կրթակարգում»:

4. Գիտեմ-ուզում եմ սովորել-սովորեցի աղյուսակը (ԳՈՒՍ)

Քայլ 1. Ուսուցիչը դասարանում հայտարարում է դասի թեման և առաջարկում է երեխաներին վերհիշել այն, ինչ նրանք գիտեն այդ մասին: Քննարկումից հետո ուսուցիչը հարցնում է, թե թեմայի վերաբերյալ ինչ հարցեր ունեն աշակերտները կամ ինչ կուզեին իմանալ: Այս հարցի շուրջ քննարկում վարելիս ուսուցիչն իր վարպետությամբ պիտի կարողանա երեխաների քննարկումն ավարտել դասի թեմայի վերաբերյալ հարցերով:

Քայլ 2. Քննարկումն ավարտելուց հետո երեխաներին հանձնարարվում է լրացնել հետևյալ աղյուսակի 1-ին և 2-րդ սյունակները: Կարելի է առաջարկել այդ աշխատանքը կատարել զույգերով՝ դասասեղանի ընկերոջ կամ, սկզբնական շրջանում, ուսուցչի օգնությամբ:

Գիտեմ	Ուզում եմ սովորել (հասկանալ)	Սովորեցի, իմացա

Քայլ 3. Երեխաները, երբ ձևակերպեն իրենց մտքերը և գրի առնեն (այն, ինչ գիտեն և ինչ են ուզում իմանալ), ուսուցիչը բացատրում է նոր դասը կամ հանձնարարում ուսումնասիրել դասագրքի համապատասխան պարագրաֆը: Այդ ընթացքում, եթե երեխաները հարցեր են ունենում, ուսուցիչը պարզաբանում է:

Քայլ 4. Առաջարկեք աշակերտներին գտնել այն տեղեկությունները, որոնք պատասխանում են իրենց հարցերին կամ լրացնում դրանք՝ ընդլայնելով թեմայի մասին պատկերացումները:

Քայլ 5. Աշակերտները, երբ վերջացնեն կարդալը, նրանց ուշադրությունը հրավիրե՛ք աղյուսակի երրորդ սյունակին՝ «սովորեցի»: Առաջարկե՛ք թվարկել այն նոր տեղեկությունները, որոնք ստացել են կարդալու կամ դասը լսելու ընթացքում, և գրի առնել տետրերում:

Մեկնաբանություններ

ԳՈՒՍ մեթոդի շնորհիվ՝ ուսուցիչը պատկերացում է կազմում տվյալ թեմայի վերաբերյալ աշակերտների նախնական գիտելիքների մասին և, դրան համապատասխան, կառուցում է դասն անցկացնելու ռազմավարություն:

Այս մեթոդով աշխատանքն աշակերտների համար այնպիսի մի համակարգ է ապահովում, որի

շրջանակներում նրանք կարողանում են կարդացվող նյութի մասին եզրահանգումներ անել, զարգացնում է աշակերտների ինքնահարցման, ինքնավերլուծության հմտությունները: Նրանք ավելի ակտիվ են մասնակցում դասին, ցանկանում են կարդալ ու գտնել իրենց հարցերի պատասխանները, քանի որ իրենք են այդ նպատակը դրել իրենց առջև: Աշակերտներն ուղղություն են ստանում, թե ինչպես նպատակային կերպով դասակարգել իրենց հայտնի և նոր տեղեկությունները: Ի հայտ են գալիս թեմայի մասին երեխաների սխալ պատկերացումները, որոնք շտկվում են դասի ընթացքում:

Շատ կարևոր է, որ երեխան կարողանա ձևակերպել, թե ինչ է ուզում իմանալ: Այդ դեպքում աշխատանքը դառնում է ավելի նպատակաուղղված ու հետաքրքիր, քան եթե դա հանձնարարի (ստիպի) ուսուցիչը:

ԳՈՒՍ մեթոդով աշխատանքն ամբողջ դասի ընթացքում աշակերտներին պահում է լարված աշխատանքային վիճակում: Մեթոդի առանձին քայլերը համապատասխանում են դասի յուրաքանչյուր փուլին. աղյուսակի 1-ին և 2-րդ սյունակները՝ խթանման փուլ, տեքստի հետ աշխատանքը՝ իմաստի ընկալում, աղյուսակի 3-րդ սյունակը՝ կշռադատման փուլ:

5. Ուղղորդված ընթերցանություն

Մտածողության այլ մակարդակի զարգացմանն է նպաստում «Ուղղորդված ընթերցանություն» մեթոդը:

Քայլ 1. Գրատախտակին գրում են նոր նյութին վերաբերող որոշ կարևոր հարցեր:

Քայլ 2. Նշված հարցերին պատասխանելու նպատակով երեխաները կարդում են դասագրքի համապատասխան պարագրաֆը:

Քայլ 3. Տետրերում գրում են հարցերի պատասխանները: Աշխատում են ինքնուրույն կամ զույգերով: Ուսուցիչը շրջում է դասարանում, ուղղորդում է աշակերտների աշխատանքը:

Քայլ 4. Աշխատանքն ավարտելուց հետո բոլոր հարցերի պատասխանները հստակեցնում են ամբողջ դասարանի ջանքերով:

Մեկնաբանություններ

«Ուղղորդված ընթերցանություն» մեթոդով աշխատանքը նպատակաուղղված աշխատանքի հմտությունները ձևավորելու շատ օգտակար միջոց է: Ուղղակի ընթերցանությունը հետապնդում է մտապահելու, հիշելու նպատակ: Նախօրոք տրված հարցերին պատասխանելու համար ընթերցանությունը ենթադրում է ավելի ուշադիր աշխատանք:

6. Առանցքային կետեր

Քայլ 1. Սովորողներն ստանում են անծանոթ տեքստ (դասագրքի պարագրաֆ):

Քայլ 2. Նրանց հանձնարարվում է մի քանի րոպե մենակ կարդալ տեքստը:

Քայլ 3. Քննարկելուց հետո դասարանը որոշում է, թե քանի առանցքային կետ կարելի է առանձնացնել այդ տեքստի բովանդակությունից: Առանցքային կետերն ամփոփ մտքերն են, որոնք բնութագրում են տեքստի գլխավոր կետերը:

Քայլ 4. Սովորողները բաժանվում են խմբերի՝ ըստ առանցքային կետերի քանակի: Ուշադիր ուսումնասիրում են տեքստը՝ իրենց ընկած առանցքային կետը ներկայացնելու համար:

Քայլ 5. Յուրաքանչյուր խումբ, բացատրությամբ ու հիմնավորմամբ, ներկայացնում է առանցքային կետերից մեկը: Դասարանը համաձայնում է կամ փոփոխություն է կատարում տվյալ կետի ձևակերպման մեջ, որից հետո ուսուցիչը գրում է այն գրատախտակին:

7. Որոշումներ

Քայլ 1. Զույգերով աշխատող սովորողներին տրվում է տեքստ, ինչպես նաև «Ամփոփող քարտեր», որոնք ամփոփում են տեքստի գլխավոր կետերը, ընդ որում՝ դրանցից մի քանիսը ճիշտ են, մյուսները՝ սխալ: Հետո տրվում են «Հետևանքների» քարտեր, որոնք նշում են տեքստում ներկայացված փաստերի հետևանքները, սակայն հետևանքները տեքստում ներկայացված չեն: Դրանցից որոշները նույնպես ճիշտ են, մյուսները՝ սխալ:

Քայլ 2. Սովորողները զույգերով որոշում են, թե որ քարտերն են ճիշտ, իսկ սխալ քարտերում, մասնավորապես, ինչն է սխալ: